



Հաճախակի տրվող հարցեր

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում JYNNEOS կապիկի ծաղիկի պատվաստանյութը:

JYNNEOS-ը 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութ է, որը հաստատվել է Սևնդի և Դեդորայքի Վարչության (FDA) կողմից՝ 18 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց մոտ կապիկի ծաղիկի և բնական ծաղիկի կանխարգելման համար: Այն նաև ունի FDA-ի կողմից արտակարգ իրավիճակներում օգտագործման թույլտվություն (EUA) 18-ից ցածր տարիքի մարդկանց համար:

- Եթե JYNNEOS պատվաստանյութը ներարկվում է *միևյուր* կապիկի ծաղիկի հետ շփում ունենալը, դա օգնում է պաշտպանվել կապիկի ծաղիկով հիվանդանալուց:
- Եթե այն ներարկվում է կապիկի ծաղիկի հետ շփումից անմիջապես *հետո* (լավագույնը 4 օրվա ընթացքում է), դա կարող է օգնել կանխել հիվանդությունը կամ այն դարձնել ավելի թեթև:

Նշում: Եթե անձն արդեն ունի կապիկի ծաղիկի ախտանիշեր, ապա պատվաստվելու համար արդեն ուշ է: Նրանք պետք է դիմեն բժշկի՝ հետազոտության և բուժման վերաբերյալ խորհրդատվության համար:

JYNNEOS պատվաստանյութը պատրաստվում է վակցինիա վիրուսի միջոցով: Սա մի վարակ է, որը կապ ունի կապիկի ծաղիկի և բնական ծաղիկի վարակների հետ: Պատվաստանյութը վարակը թուլացնում է այնպես, որ այն պատվաստվող անձի կամ շրջապատող մարդկանց մոտ վակցինիա, բնական ծաղիկ կամ կապիկի ծաղիկ չառաջացնի:

ACAM2000 կոչվող պատվաստանյութը հաստատվել է FDA-ի կողմից՝ բնական ծաղիկի կանխարգելման համար, սակայն կարող է օգտագործվել նաև կապիկի ծաղիկի կանխարգելման համար: Քանի որ ACAM2000-ն այս պահին չի օգտագործվում ԱՄՆ-ում կապիկի ծաղիկի կանխարգելման համար, այս ՀՏՀ-ն վերաբերում է միայն JYNNEOS պատվաստանյութին:

2. Ինչպե՞ս է տրվում պատվաստանյութը:

JYNNEOS պատվաստանյութը տրվում է ներարկման միջոցով: Կան կիրառվող երկու տարբեր մեթոդներ.

- **Ենթամաշկային ներարկում:** Սա նշանակում է, որ պատվաստանյութը ներարկվում է Նախաբազուկի հատվածում՝ մաշկի տակ: Այս մեթոդը օգտագործվում է 18-ից փոքր տարիքի մարդկանց դեպքում և ցանկացած տարիքի այն մարդկանց համար, ովքեր ունեցել են կելոիդային սպիներ: Կելոիդային սպին հաստ, ուռուցիկ սպի է, որը կարող է առաջանալ մաշկի վնասումից հետո, օրինակ՝ կտրվածք, ծակում կամ վիրահատություն:
- **Ներմաշկային ներարկում:** Սա նշանակում է, որ պատվաստանյութը ներարկվում է մաշկի շերտերի արանքում: Այս մեթոդը կիրառվում է 18 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց մեծամասնության դեպքում: Այս տարբերակով պատվաստվող մարդիկ ներարկման համար կարող են ընտրել մարմնի 3 մասերից մեկը՝ Նախաբազուկի վրա (դաստակի և արմուկների միջև գտնվող հատվածում), մեջքի վերին մասում ուսի շերտից ներքև և դելտոիդային մկանների վրա (ուսի մկանները): Դուք կարող եք տեսնել մարդկանց նկարները, ովքեր պատվաստումներ են ստանում [Նախաբազուկի մեջքի վերին հատվածում](#) կամ [ուսի վրա](#):





Հաճախակի տրվող հարցեր

Ներկայումս 18 և ավելի բարձր տարիքի մարդկանց մեծամասնության համար կիրառվում է ներմաշկային մեթոդը: Այնուամենայնիվ, ենթամաշկային պատվաստում նույնպես հնարավոր է ստանալ, եթե ունեք կելոիդ սպիների հետ կապված մտահոգություններ կամ խիստ նախընտրում եք պատվաստման այդ տարբերակը: Պատվաստում իրականացնողին անպայման տեղեկացրեք Ձեր նախընտրության մասին:

3. Քանի՞ դեղաչափ է ինձ անհրաժեշտ:

JYNNEOS պատվաստանյութը տրվում է երկու դեղաչափով առնվազն 4 շաբաթ տարբերությամբ: Մարդու օրգանիզմը առաջին դեղաչափը ստանալուց մի քանի օր կամ շաբաթ հետո կսկսի ստեղծել պաշտպանություն, սակայն առավելագույն պաշտպանությունը ձեռք կբերի միայն երկրորդ դեղաչափը ստանալուց երկու շաբաթ հետո: Դուք այս դեպքում եք համարվում լիովին պատվաստված:

Դեռևս կարևոր է շարունակել այլ քայլեր ձեռնարկելը վտանգը նվազեցնելու համար, նույնիսկ երբ Դուք լիովին պատվաստվել եք:

4. Որքա՞ն լավ է գործում պատվաստանյութը:

Մենք դեռևս չունենք իրական դեպքերի բավարար տվյալներ, որպեսզի ասենք, թե որքան լավ է պատվաստանյութը պաշտպանում մարդկանց կապիկի ծաղիկ ձեռք բերելուց այս ընթացիկ բռնկման ժամանակ: Այնուամենայնիվ, CDC-ի կողմից [վերջերս կատարած ուսումնասիրությունը](#) ցույց է տվել, որ JYNNEOS պատվաստանյութի մեկ դեղաչափ ստացած յուրաքանչյուր 1 վարակի դիմաց եղել է 14 վարակի դեպք այն մարդկանց շրջանում, ովքեր պատվաստանյութ ՉԵՆ ստացել: Աֆրիկայից ստացված ավելի հին տվյալները ցույց են տալիս, որ JYNNEOS պատվաստանյութը առնվազն 85%-ով արդյունավետ է մարդկանց կապիկի ծաղիկից պաշտպանելու մեջ, երբ պատվաստանյութը ներարկվում է նախքան վարակի հետ շփումը:

Պատվաստանյութը կարող է կանխել կապիկի ծաղիկի հետ շփված մարդու վարակվելը, եթե այն տրվում է շփումից հետո 4 օրվա ընթացքում: Եթե անձը պատվաստվում է շփումից 4-14 օր հետո, պատվաստանյութը ավելի քիչ հավանական է, որ կկանխի վարակը, բայց եթե անձը հիվանդանա կապիկի ծաղկով, նրա ախտանիշները կարող են ավելի մեղմ լինել:

Հայտնի չէ, որ պատվաստանյութն ազդում է, եթե այն ներարկվում է, երբ անձն արդեն ունի կապիկի ծաղկի ախտանիշներ:

Քանի որ մենք դեռ ուսումնասիրում ենք, թե որքան լավ է պատվաստանյութը ազդում այս բռնկման ընթացքում, կարևոր է շարունակել այլ քայլեր ձեռնարկել վտանգը նվազեցնելու համար, նույնիսկ երբ Դուք լիովին պատվաստվել եք:

5. Ո՞վ պետք է պատվաստվի:

Պատվաստումը խորհուրդ է տրվում այն մարդկանց, ովքեր շփում են ունեցել կապիկի ծաղիկ վարակի հետ և այն մարդկանց, ում համար կապիկի ծաղիկի հետ ներկայումս կամ հետագայում շփվելու վտանգ կա:





Հաճախակի տրվող հարցեր

Պատվաստանյութ ստանալու իրավունք ունեն հետևյալ անձինք.

- Ցանկացած տղամարդ կամ տրանսգենդեր, ով սեռական հարաբերություն է ունեցել տղամարդկանց կամ այլ տրանսգենդերների հետ
- Ցանկացած սեռի կամ սեռական կողմնորոշման մարդիկ, ովքեր զբաղվում են մարմնավաճառությամբ և/կամ գործարքային սեքսով (օրինակ՝ սեքս փողի, տանիքի, սննդի կամ այլ ապրանքների կամ անհրաժեշտությունների դիմաց) կամ սեռական հարաբերություն են ունենում խոշոր հասարակական միջոցառման ժամանակ:
- ՄԻԱԿ ունեցող մարդիկ, հատկապես մարդիկ, որոնք ունեն անվերահսկելի կամ բարդացած ՄԻԱԿ:
- Այն մարդիկ, ովքեր մաշկը մաշկին կամ մտերմիկ (ինսոիմ) շփում են ունեցել որևէ մեկի հետ, որը հաստատվել է կամ կասկած կա, որ ունի կապիկի ծաղիկ, ներառյալ նրանք, ովքեր դեռևս հաստատում չեն ստացել Հանրային Առողջության Վարչությունից:
- Այն մարդկանց սեռական գուգրնկերները, որոնք պատկանում են վերը նշված խմբերից ցանկացածին:
- Մարդիկ, ովքեր ակնկալվում է, որ կլինեն վերոնշյալ խմբերից որևէ մեկում:
- Որոշակի մասնագիտություններով մարդիկ, ներառյալ՝
 - Այն մարդիկ, ովքեր աշխատում են օրթոտոքսիկ վիրուսի հետ կամ թեստեր են կատարում օրթոտոքսիկ վիրուսի համար հետազոտական կամ կլինիկական լաբորատորիաներում:
 - Բուժաշխատողներ, ովքեր հոգ են տանում հաստատված կամ կասկածվող կապիկի ծաղիկ ունեցող մարդկանց մասին: Սա ներառում է կլինիկաների և բնապահպանական ծառայությունների աշխատակիցներին: Տե՛ս ՀՏՀ-ի ներքևում *ես բուժաշխատող եմ: Արդյո՞ք ես պետք է պատվաստվեմ:*

Հետագայում ավելի շատ մարդիկ կարող են պատվաստանյութ ստանալ: Վերջին տեղեկությունների համար տե՛ս ph.lacounty.gov/monkeypox/vaccine.htm:

6. Որո՞նք են JYNNEOS-ի կողմնակի ազդեցությունները:

Կողմնակի ազդեցությունները ներարկման մասում բնորոշ են JYNNEOS-ով ինչպես ենթամաշկային, այնպես էլ ներմաշկային պատվաստումների ժամանակ: Դրանք ներառում են կարմրություն, այտուց, ցավ, ձգվածություն/կոշտություն և/կամ քոր: Այս ախտանիշները ավելի հաճախ նկատվում են ներմաշկային ներարկումների ժամանակ: Որոշ մարդկանց մոտ քորն ու այտուցումը կարող են տևել մի քանի օրից մինչև մի քանի շաբաթ: Այլ կողմնակի ազդեցությունները կարող են ներառել մկանային ցավ, գլխացավ, սրտխառնոց, դող կամ հոգնածության զգացում: Կա ջերմելու փոքր հավանականություն:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, կա շատ փոքր հավանականություն, որ պատվաստանյութը սուր ալերգիկ հակազդեցություն կառաջացնի: Եթե ունեք սուր ալերգիկ հակազդեցության նշաններ (օրինակ՝ ցան, դեմքի կամ կոկորդի այտուցում, շնչառության դժվարություն, սրտի արագ բաբախում կամ գլխապտույտ), **անմիջապես զանգահարեք 911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց: Այլ հարցերի դեպքում դիմեք բուժաշխատողին:





Հաճախակի տրվող հարցեր

7. Կարո՞ղ եմ պատվաստանյութը ստանալ մեկ այլ պատվաստանյութի հետ միաժամանակ:

Այո: JYNNEOS պատվաստանյութը կարելի է ստանալ այլ պատվաստանյութերից առաջ, հետո կամ միաժամանակ: Սա ներառում է գրիպի և COVID-19-ի դեմ պատվաստանյութերը:

Եթե Դուք 12–39 տարեկան տղամարդ եք, կարող եք մտածել JYNNEOS պատվաստանյութ ստանալուց հետո 4 շաբաթ սպասելու մասին՝ նախքան COVID-19 պատվաստանյութ ստանալը: Դա պայմանավորված է նրանով, որ միոկարդիտի (սրտի մկանների բորբոքում) վտանգի մի փոքր ան կարող է լինել, եթե պատվաստանյութերը ստանաք գրեթե միաժամանակ: Բայց եթե Կապիկի ծաղիկով հիվանդանալու վտանգը Ձեզ համար մեծ է կամ վերջերս շփում եք ունեցել վարակի հետ, Դուք պետք է ստանաք Ձեր JYNNEOS պատվաստանյութը, նույնիսկ եթե վերջերս եք ստացել COVID-19 պատվաստանյութի դեղաչափը:

8. Ես բուժաշխատող եմ: Արդյո՞ք ես պետք է պատվաստվեմ:

Կապիկի ծաղիկի փոխանցման վտանգը շատ փոքր է բուժաշխատողների (HCW) համար, եթե նրանք հետևում են վարակի վերահսկման համապատասխան գործելաոճին: Սա ներառում է անձնական պաշտպանիչ սարքեր (PPE) կրելը և նմուշների հավաքման անվտանգ մեթոդներ կիրառելը: Սակայն բուժաշխատողները, ովքեր հոգ են տանում հաստատված կամ կասկածվող կապիկի ծաղիկ ունեցող մարդկանց մասին, իրավասու են պատվաստանյութը ստանալ: Սա ներառում է այն բուժաշխատողներին, ովքեր հավանական է, որ լաբորատորիայի համար նմուշն կվերցնեն կապիկի ծաղիկով հիվանդ մարդկանցից (օրինակ՝ բուժաշխատողն աշխատում է սեռական առողջության կլինիկաներում կամ կլինիկական հաստատություններում, որոնք ծառայում են ռիսկային խմբերին):

Այն աշխատողները, ովքեր միայն JYNNEOS պատվաստանյութը ներարկում են, բայց չեն զբաղվում այն մարդկանց խնամքով, որոնք հաստատվել է կամ կասկած կա, որ կապիկի ծաղիկ ունեն, իրավասու չեն կապիկի ծաղիկի դեմ պատվաստվել:

Հետզիումային կանխարգելումը (PEP) կարող է առաջարկվել բուժաշխատողներին որոշակի մասնագիտական շփումներից հետո: Տե՛ս [CDC-ի՝ վարակվելու բարձր և միջին վտանգավորության աղյուսակը](#):

9. Եթե ես կապիկի ծաղիկի ախտանիշներ ունեմ, պե՞տք է արդյոք պատվաստվեմ:

Ոչ: Եթե Դուք ունեք [կապիկի ծաղիկի ախտանիշներ](#), Դուք չպետք է ստանաք կապիկի ծաղիկի դեմ պատվաստանյութ: Հնարավորինս շուտ խոսեք Ձեր բժշկի հետ Ձեր ախտանիշների մասին: Եթե չունեք բժիշկ կամ բժշկական ապահովագրություն, կարող եք այցելել Հանրային Առողջության [սեռական առողջության կլինիկա](#): Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Հանրային Առողջության Վարչության զանգերի կենտրոն 1-833-540-0473 հեռախոսահամարով (շաբաթը 7 օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը):





10. Ես արդեն վարակվել եմ կապիկի ծաղիկով, պե՞տք է արդյոք պատվաստվեմ:

Ոչ: Հիմնվելով ներկայումս եղած տեղեկությունների վրա՝ եթե Դուք ունեցել եք կապիկի ծաղիկ, ապա Դուք պաշտպանված եք նորից վարակվելուց: Դուք ունեք «բնական անվարակունակություն»: Պատվաստում այս պահին խորհուրդ չի տրվում: Այնուամենայնիվ, եթե ունեք իմունային անբարարություն, Դուք պետք է խոսեք Ձեր բժշկի հետ, որպեսզի պարզեք՝ արդյոք Դուք պետք է պատվաստվեք:

11. Եթե պատվաստանյութի առաջին դեղաչափը ստանալուց հետո ես կապիկի ծաղիկով վարակվեմ, պե՞տք է արդյոք ստանամ երկրորդ դեղաչափը:

Հիմնվելով ներկայումս եղած տեղեկությունների վրա՝ կապիկի ծաղիկով հիվանդանալուց հետո Դուք պաշտպանված եք նորից վարակվելուց: Սա նշանակում է, որ երկրորդ դեղաչափը ստանալու կարիք չկա: Եթե Դուք ունեք իմունային անբավարարություն (ունեք թույլ իմունային համակարգ), հարցրեք Ձեր բժշկին, թե արդյո՞ք պետք է ստանաք երկրորդ դեղաչափը:

12. Եթե ես տարիներ առաջ պատվաստվել եմ բնական ծաղիկի դեմ, արդյո՞ք դարձյալ պետք է պատվաստեմ Կապիկի ծաղիկի դեմ:

Այո: Մարդիկ, ովքեր պատվաստվել են բնական ծաղիկի դեմ մինչ այս բռնկումը, նաև պետք է ստանան կապիկի ծաղիկի դեմ պատվաստանյութ: Դա պայմանավորված է նրանով, որ բնական ծաղիկի դեմ պատվաստանյութից պաշտպանվածությունը ժամանակի ընթացքում կարող է թուլանալ:

13. Կարո՞ղ եմ պատվաստանյութը ստանալ, եթե ունեմ թուլացած իմունային համակարգ և/կամ ՄԻԱՎ:

Այո: Կարևոր է պատվաստվել, քանի որ թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ, ինչպիսիք են բարդացած կամ չվերահսկվող ՄԻԱՎ-ով մարդիկ, ծանր հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ են, եթե չփվում են կապիկի ծաղիկի վարակի հետ: Ուսումնասիրվել է JYNNEOS-ի ազդեցությունը ՄԻԱՎ-ով հիվանդ մարդկանց վրա, և ոչ մի լուրջ բացասական հակազդեցություն չի նկատվել:

Կարևոր է նշել, որ եթե Դուք ունեք թուլացած իմունային համակարգ, ապա քիչ հավանական է, որ պատվաստումից հետո կստեղծվի ուժեղ իմունային պատասխան: Սա նշանակում է, որ հատկապես կարևոր է այլ քայլեր ձեռնարկել՝ կապիկի ծաղիկից զերծ մնալու համար:

14. Կարո՞ղ եմ պատվաստանյութը ստանալ, եթե Էկզեմա ունեմ:

Այո, ուսումնասիրվել է JYNNEOS-ը առոպիկ մաշկաբորբ (Էկզեմա) ունեցող մարդկանց վրա, և ոչ մի սուր հակազդեցություն չի նկատվել: Այս հիվանդությամբ տառապող մարդիկ կարող են ավելի ծանր հիվանդություն ունենալ, եթե վարակվեն կապիկի ծաղիկով:





Հաճախակի տրվող հարցեր

15. Արդյո՞ք ես պետք է պատվաստվեմ, եթե հղի եմ կամ հնարավոր է, որ հղի լինեմ:

Եթե Դուք հղի եք և շփում եք ունեցել կապիկի ծաղկի հետ, ապա խստորեն հորդորվում է մտածել պատվաստվելու մասին: Դա պայմանավորված է նրանով, որ կապիկի ծաղկի վիրուսը կարող է հղիության ընթացքում փոխանցվել պտղին կամ ծննդաբերության ընթացքում և դրանից հետո փոխանցվել նորածնին սերտ շփման միջոցով: Վաղաժամ ծննդաբերություն, վիժում, մեռելաձնություն և երեխայի մոտ կապիկի ծաղիկ. սրանք բոլորն էլ արձանագրվել են այն բանից հետո, երբ մարդիկ հղիության ընթացքում հիվանդացել են կապիկի ծաղիկով: Հայտնի չէ, թե որքան հաճախ է դա տեղի ունենում կամ արդյոք կարող է տեղի ունենալ ընթացիկ բնկման ժամանակ: Հղիության ընթացքում JYNNEOS-ի պատվաստման վտանգների վերաբերյալ տվյալները սահմանափակ են: Եթե պատվաստումների վերաբերյալ հարցեր ունեք, խոսեք մատակարարի հետ: Շփումից հետո պատվաստումը որքան շուտ արվի, այնքան ավելի լավ ազդեցություն կունենա:

16. Կարո՞ղ եմ պատվաստվել, եթե կրծքով եմ կերակրում:

Եթե Դուք վարակվել եք կապիկի ծաղիկով և կրծքով կերակրող եք, Դուք պետք է պատվաստվեք: Կրծքով կերակրվող նորածինների կամ կաթի արտադրության վրա JYNNEOS-ի ազդեցության տվյալներ դեռևս հասանելի չեն: Նաև հայտնի չէ, թե արդյոք JYNNEOS-ը փոխանցվում է մոր կրծքի կաթով, թե ոչ: Բայց քանի որ պատվաստանյութը չի պարունակում վերարտադրվող վիրուս, պատվաստվելը չի կարող Ձեր երեխային վարակել կապիկի ծաղիկով:

17. Իմ առաջին դեղաչափը ենթամաշկային էր (մաշկի տակ): Ինչպե՞ս է ներարկվելու իմ երկրորդ դեղաչափը:

Եթե Դուք 18 տարեկան կամ ավելի ավելի բարձր տարիքի եք, ապա Ձեզ կառաջարկվի երկրորդ դեղաչափը ստանալ ներմաշկային եղանակով (մաշկի շերտերի միջև)՝ ավարտելու երկու դեղաչափի շարքը (տե՛ս *Ինչպե՞ս է պատվաստանյութը ներարկվում* վերևում): Այնուամենայնիվ, երկրորդ դեղաչափը կարող եք ստանալ նաև ենթամաշկային եղանակով, եթե ունեք կելոիդ սպիների հետ կապված մտահոգություններ կամ խիստ նախընտրում եք երկրորդ դեղաչափը ստանալ այդ կերպ:

18. Կարո՞ղ եմ երկրորդ դեղաչափը ստանալ ենթամաշկային եղանակով (մաշկի տակ), եթե առաջին դեղաչափը ստանալուց հետո լրանա իմ 18 տարեկանը:

Այո: Երբ Դուք դառնում եք 18 տարեկան, պատվաստանյութը սովորաբար տրվում է ներմաշկային ճանապարհով (մաշկի շերտերի միջև): Բայց եթե Դուք մտահոգված եք կելոիդային սպիներով կամ խիստ նախընտրում եք ենթամաշկային պատվաստումը, ապա ենթամաշկային պատվաստում նույնպես հնարավոր է: Պատվաստում իրականացնողին անպայման տեղեկացրեք Ձեր նախընտրության մասին:





Հաճախակի տրվող հարցեր

19. Արդյո՞ք պետք է իմ ծնողների համաձայնությունը՝ պատվաստում ստանալու համար:

Հանրային Առողջության հաստատություններում, եթե Դուք 12-17 տարեկան եք, կարող եք համաձայնել ստանալ պատվաստանյութը՝ ստորագրելով այս [ձևը](#): Այս հաստատություններում, եթե Դուք 12-ից ցածր տարիքի եք, Ձեզ պետք է ուղեկցի ծնողը, օրինական խնամակալը կամ պատասխանատու չափահասը: Դուք նաև պետք է ունենաք այս [համաձայնության ձևը](#), որը ստորագրված է Ձեր ծնողի կամ օրինական խնամակալի կողմից:

20. Որտեղի՞ց կարող եմ ավելի շատ տեղեկություններ ստանալ:

- Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության (LAC DPH) կապիկի ծաղկի կայքէջ՝ ph.lacounty.gov/Monkeypox | [Կապիկի ծաղկի պատվաստանյութի էջ](#)
- Սննդի և Դեղորայքի Վարչության (FDA) [Փաստերի թերթիկ պատվաստվողների և ինսամոդների](#) համար (ներմաշկային պատվաստումների և 18-ից ցածր տարիքի մարդկանց համար)
- Հիվանդությունների Վերահսկման Կենտրոնների (CDC) [JYNNEOS պատվաստանյութի հինչ Դուք պետք է իմանաք](#) պատվաստանյութի մասին հայտարարագիր (ենթամաշկային պատվաստանյութի մասին՝ 18 և բարձր տարիքի մարդկանց համար)
- CDC-ի [Կապիկի ծաղկի դեմ պատվաստանյութի կայքէջ](#)
- Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչության (CDPH) [Կապիկի ծաղկի դեմ պատվաստանյութի կայքէջ](#)

